5. ՍՄԲԱՏՆ ՈՒ ՍՀԱԿ

Շատ աղքատ մարդու մեկին երկու հատ տղա է էղնում։ Մեծի անունը Սմբատ է էղնում, պզտկին՝ Սհակ։

Էդ աղքատ մարդն ու կնիկը մեռնում են։ Մնում են տղերք եթում, մեծը տաս տարեկան, պզտիկը՝ օխտը։

Հերն ու մերը որ մեռնում են Սմբատը ըսում է.— Ես ախպորս պտի տանիմ էն մոտիկ գեղի տերտերի մոտ տամ կարդալու։ Ու տանում էդ տերտերին տալում է։

Տերտերը խոսում է Սմբատի հետ որ.— Ինչունի հինգ տարի, տարին իրեք մանեթ հախ կառնիմ ու կը սովրեցնեմ։

Սմբատն էլ ղաբուլ է անում, ու հ'ինքն էլ գալում իրանց գեղին էղնում է նոքար։

Էդ աստվածասեր տերտերը ինչունի հինգ տարի Սհակից իրեք մանեթ հախ է առնում, իր հացով ջրով պահում է, կարդալ գրել լավ սովրեցնում է։ Հինգ տարուց հետև արդեն ինքը համ Սհակին կարդցնում է, համ էլ հախ է տալում։ Սհակն էլ շատ ժիր ու խելացի տղա է էղնում, էդ տերտերի տուն էդոր իրանց ավլտի պես հազ էն անում։

Տերտերին մե սիրուն աղջիկ էլ է էղնում, էդ աղջիկն էլ Սհակի հետ կարդում է տերտերի մոտ։

Սհակն ու էդ տերտերի աղջիկ սրտով հ'իրարու հետ քուր ու ախպեր են էղնում։

Սհակը մնում է տերտերի տուն ինչունի տասը տարի։ Հինգ տարվանից հետև տերտեր Սհակին համ կարդցնում է, համ էլ հախ է տալում։ Ինչունի տաս տարի թմմելը Սհակի հախ տերտերի վրեն էղնում է հարուր հիսուն մանեթ։ Սմբատն էլ տասը տարի իրանց գեղին էղնում է նոքար, աշխատում է երկուհարուր մանեթ։ Հ'ելնում էրթում է, որ տերտերի տնեն ախպորը բերե։ Էրթում հասնում է տերտերի տուն, հ'իրկուն տերտերին ըսում է.

— Տերտեր ջան, էկել եմ Սհակին տանիմ, բոլ է, ինչքան որ մնաց, չնորհակալ եմ տերտեր ջան։

Սարախտան հ'ելնում են որ գան, տերտեր բերում 150 մանեթ տալում է Սմբատին ու ըսում է.— Էս էլ Սհակի հինգ տարվա հախն է։ Ինչունի հինգ տարի առանց հախ էր, հինգ տարուց հետո հախով է ու էս 150 մանեթն էլ էնոր աշխատանքն է էղած։

Հ'ելնում են էրկու ախպեր տերտերի աչն համբուրում, մնաս բարով են ասում ու գալում են իրանց գեղ։

Գալում են տուն իրանց համար կով են առնում, եզներ են առնում ու բաշլայում են ռանչպարութուն անել։ Սմբատը կարգվում է, մի աղջիկ է առնում գեղի միջեն, մի երկու տարի անցնում երեխաներ է էղնում։

Սհակն էլ արթըխ լավ դալի ղանլի է դառնում, կարգվելու վախտն է էղնում։ Սմբատ աչում է, որ իր տան գործն էլ մեկ օղլուշաղով չի քելում, ռանչպարութունը դժար է, մտածում է Սհակին էլ նիչանել։ Սմբատ հ'ելնում էրթում է մոտիկ գեղը, էրթում է իրան բարեկամի տուն, հարց ու փորձ է անում թե.— Սեր տան, իմ ախպորս լայեղ աղջիկ կա՞ ձեր գեղին, որ հ'ուզենք։

Բարեկամն ըսում է թե.— Վալլահ, մեր գեղին էնենց լավ աղջիկ չկանե, համա մի լավ աղջկա տեղ քեզի կըսեմ, դու դիտես էդ մարդուն։ Էսինչ գեղի տերտերին մի լավ աղջիկ կա, որ ախպերդ էնոր մոտ կարդում էր։

Հ'ելնում Սմբատ էրթում է տերտերի տուն, որ տերտերի աղջիկը հ'ուզե Սհակին։ Սհակը հեչ բանե խաբար չէ։ Զաթի գեղացիքն էլ էնենց ղայդա չունին որ տղին, յա աղջկան հարցնեն թե. «Հ'ո՞ւմ ես առնում»։

Հ'իրիկուն Սմբատը խոսում է տերտերի հետ թե.

— Եկել եմ ասում յոլուղ անունով քու աղջիկդ հ'ուզեմ մեր Սհակին։

Տերտեր շատ է ուրախնում, ասում է.— Ես իմ աղջիկս խոմ Սհակից ավելի լավ տղի չպտի տամ։

Աղջկան էլ հարցնող չկա, էն խո ծախու ապրանք է, վեվ էնոր խոսեցնել կուտա։

Տվեցին. առան, կերան, խմեցին քեֆ արին։ Սմբատ դառավ էկավ տուն, թե.— Վալլահ, գնացի, տերտերի աղջիկ հ'ուզեցի Սհակին։

Սհակ, ըստե, էլ ամոթու չի ասում, թե. «Ես տերտերի աղջրկան չեմ առնում, ընդոր քուր եմ ասելը։ Աղջիկն էլ չի ասում, թե. «Ես էդ տղին ախպեր եմ ասե»։ Էդենց, բանը մնում է ինչունի հարսնիքի վախտ։ Էրկու թարաֆն էլ հարսնքի թապտիր են տեսնում, որ պսակեն։ Ամա սաղ տարին Սհակի նիաթները չի բացվում ու ախպերն էլ ոչինչ չի հասկնում, բազի հարցնում է էլ՝ Սհակը բան չի ասում ամոթուն։

Սմբատը խաբար է տալում տերտերին, թե. «Ցլան օր հարսնածը դալում է», տերտերն էլ իր ամեն մի թապտիրը տեսնում է։ Հարսնածը էրթում հարսը բերում է, տանում պսակում են, մե օր, էրկօր հարսնիք ու քեֆ ու ուրախութուն են անում։ Էն հ'իրկուն որ հարսնիքը վերջանում է, Սհակը էրթում մտնում է իր օթախ ու իր մեջ որոշում է. «Ես, էդ աղջկան մեկ հեղ սրտով քուր եմ ասե, հիմի դալում է ըստե, թե որ քուր կը մնա ինչունի օր մահին՝ լավ, թե չի մնա՝ աստուծ իր բան հաչողե, թող էրթա հ'ուր հ'ուզում է»։ Էդ մտածմունքի մեջն էր, բիրդան հորքուր-մորքուրներ հարսը բերին։ Քիչ խոսացին յարանութուն արին ու թողին գնացին։

Սհակ հ'ուզում է փորձել աղջկան, ասում է.— Բարով, հազար բարի էկար մեր տուն, քուրս։

— Ասսու բարին ախպեր ջան։

— Միտդ դալո՞ւմ է,— Սհակ կոսե,— որ ձեր տուն կարդացած վախտ քուր ու ախպեր էղանք հ'իրուր հետ։ Հիմիկ ղաբուլ կոնե՞ս ինչունի մահ քուր ու ախպոր պես հ'իրար հետ ապրինք։ Թե ղաբուլ անում ես, գլխիս վրա կեցի, թե ղաբուլ չես անում, հոգով չես կաբա ինձ հետ դիմանալ, ճամբեն հ'առաջդ է, գնա հորդ տուն։ Ես քեզի մի անգամ հոգով քուր եմ ասել, խոսքես չեմ դառնում։

— Չէ՛, չէ՛, ամոթ է, հորս տան ճամբեն մի ցցներ, ես որ էրթըլու էղնեի, հորս կոսեի թե, չեմ էրթում։ Ես էլ քեզի հոգով ախպեր եմ ասել, ինչունի օրնի մահին էլ կ'մնամ ու քուր ու ախպոր պես կապրիմ։

Էսենցով կեցան, իրանց սրոը օնչովի չա ին մի էրկու իրեք տարի։ Էրթում աշխատում էին ինչունի հ'իրկուն, հ'իրկուն դալում մտնում էին իրանց օթախ ինչունի լուս, յա մեկ էրկու սհաթ պա-

կաս աղոթք էին անում։ Առավոտ հ՚ելնում էին քնհարամ, էլ չէին կռնար էնքան էլ շատ լավ աշխատել, քնհարամ մնալուց թուլանում էին։ Էլի մի երկու տարի անցնում է, Սմբատ աշում է, որ էլ Սհակն ու իր կնիկ էնքան էլ չեն աշխատում, ասում է. «Ջար, ախպերս մատղաշ չունի էդոր համար չի աշխատում։ Լավն էն է, որ հ՚իրարից բաժնվինք»։ Սհակն ու Սմբատ հ՚իրարուց բաժնվում են։

Մի քանի տարի էլ էսենց Սհակն ու իր կնիկ բաժան կ՚ապրին, ու զոր ու գիշեր աղոթք կոնեն, իրանց բաժին մալն ու փարեն կուտեն կը թեթևցնեն։ Օր մի Սհակ հ՚ելնում թապտիր է տեսնում, որ էրթա Երուսաղեմ։

Կնկան ասում է.— Ես էրթում եմ Երուսաղեմ, ինչունի քառսուն օր ընձի կըբաքլայես, էկա, էկա, թե որ ինչունի քառսուն օր չէկա՝ հիմացի որ էլ չեմ գար։ Նեղ որ մնացիր կէրթաս ախպորս մոտ, ախպերս չ՚պահեց կ՚էրթաս քավորոշ գեղ, մեր քավորոշ մոտ, թե էն էլ չ՚պահեց, էն վախտ արի Երուսաղեմ, ընձի գտի։

Սհակը մնաս բարով է անում կնկան ու էրթում է Երուսաղեմ, էլ չգալու նպատակով։

Սհակ էրթում է Երուսաղեմ, օրշնվում էղնում է վարդապետ։

Կնիկ էրկու տարի սաղ բաքլայեց Սհակին, Սհակը չէկավ, ինքն էլ տան էղած չէղած ծախեց կերավ ու չգնաց տեգր Սմբատի մոտ։

Սմբատն էլ աշեց, որ էրկու տարին թմմավ, իր ախպեր գնաց ու չէկավ, օր մի սատանեն մտավ էդ մարդու ղալպ, հ՚իրկուն հ՚ելավ գնաց ախպոր կնկա տուն։ Աշեց, որ Սհակի կնիկ շոքած աղոթք է անում։ Նստում խոսում է, խոսքի միշով հասկցնում է հարսին։ Հարսը հասկնում է տեգեր միտք, յալվար է անում թե.— Ամոթ է, թող միտքդ, հ՚ելի գնա քու գործին։

Աշում է որ իլլաճ չկա, Սմբատի ձեռից չի կաբա ազատվի, ասում է.— Դու քու աստուծ, որ չես համոզվում, յավաշ էրթամ դուս լվացվիմ, ոտներս հ՚իստկեմ գանք պառկինք։

Տերտերի աղջիկ հ՚ելնում դուս, խափում է տեգեր ու թողնում փախնում է, հայտե քավորոշ դեղ, հ՚ուրտի ես էկա։

Էրթում հասնում է գիշեր քավորոշ տուն, դուռը ծեծում։ Հ՚ելնում բանում են, աշում են որ իրանց սանամեր.— Ցա, սանամեր, խեր էղնի, էս մո՞նց է էղել, որ էս գիշերով էկել ես։

— Ի՞նչ անեմ քավոր շան, էկել եմ ձեր տուն, որ ընձի պահեք, ձեր տան մեջ, ես էլ ձեր տան խզմաթ բան կոնեմ։

Քավորն ասում է.— Սանամեր շան, մեր գլխի վրա տեղ ունիս, մեր աչքի լուսի պես քեզի կը պահենք։

Սանամեր մի վախտ էլ քավորոշ տանն է մնում, խզմաթ բան է անում։ Էղոնք էլ էնքան հազ են անում, որ հոգի են տալում սանամոր վրեն։

Էդ քավորոշ էրեխա չի էղնում։ Մոնց է էղնում աստուծ խեղճ է գալում մի տղա է տալում։ Մարդ ու կնիկ էնքան հազ են անում, որ էլ չեմ կարա ասել։

Քավորոշ մի մշակ է էղնում, էդ մշակի աչքն էլ հ'ընկնում է սանամորը, շատ է աշխատում, հ'ետև հ'ընկնում։ Մի օր էլ խոսք է քցում, սանամեր անպատվում է։ Մշակն ըսում է.— Ցավաշ դու, ես էննց բան անեմ, որ դու էլ փոշմնիս։

Մի գիշեր մշակ աշում է, որ աղեն ու իր կնիկ քնած են։ Դանակը սրում էրթում է էդ մեկուճար էրեխեն օրոցքի մեշ մորթում է ու արնոտ դանակ տանում քնած վախտ դնում է սանամոր շեպ ու դալում քնում է։

Քավորը զարթում աշում է, որ տղի ձեն չի հ'ելնում։ Կնկան ըսում է.— Ա՜յ կնիկ, մի վեր ել աշե էրեխեն ձեն չի հանում, ամեն օր ախր շատ էր լալում։

Կնիկ հ'ելնում աշում է, որ աղեն մորթած է։ Ծնկներին տալում ու լալում է, մարդուն ըսում է թե.— Ջես ըսում տղեն մորթած են։

Հ'ելնում մարդ ու կնիկ լալում են։ Ձեն հասնում է սանամեր, հ'ելնում գալում է, որ տղեն մորթած են, շվարում, մնում է, հ'ինքն էլ է լալում։ Մշակն էլ է գալում, ըսում է.— Էդ ի՞նչ է էղած, յազո՞ւզ եք լալում։

Ըսում են, որ գիշեր տղեն օրոցքի մեշ մորթեր են։

— Վե՞վ կոնե էս գիշեր հատաղեն, ձեր սանամորեն զայրի։

Ձեն հավատում քավորն ու իր կնիկը մշկին, հերսոտում են։

— Ջէ՛,— կոսե,— որ էդենց է, ես սանամոր շեպը պտի աշեմ, ձեր ի՞նչ բանն է։

Մշակը էրթում սանամոր շեպից արնոտ դանակը հանում է.

— Ա՛ն, էս ի՞նչ արնոտ դանակ է, որ ես ասում եմ, թե սանամերն է մորթած, դուք չեք հավատում։

Սանամերն ըսում է.— Որ էդենց է, սուտ ասողը իր պատիճ աստծմեն գտնի, գոթի յարաներ վրեն թափի, լավ օր չտեսնի։

Քավորն ու իր կնիկն էլ հեչ չեն հ'իմանում թե ինչ ասեն, ձեները կռում մտածում են, բազի լալում են։

Սանամեր վերցնում ըսում է.—Մի լաց լինեք իզուր տեղ, պառկեք քնեք, հալբատ աստուծ ողորմած է։

Քավորն ու իր կնիկն էլ շատ որ լալում են, բեզրում, թմրում,

քները տանում քնում են։ Սանամերը բերում էրեխի կռած գլուխը կպցնում է ջանդկին, կապում է օրոցքի մեջն ու էրթում իր հ'օդեն, չոքում լալում ու աղոթք է անում։ Աստուծ լսում է էդ սուրբի աղոթքը, էրեխին էլի հոգի է տալում, սաղնում բաշլայում է օրոցքի մեջ լալ։ էրեխի ձենից օյամիշ է էղնում հերը, ձեն է տալում կնկան.— Կնի'կ, կնի'կ վեր հ'ել տղեն սաղցեր լալում է։

Կնիկն էլ հ'ելնում աչում է, որ ղորդ, տղեն սաղցել է։ Կանչում են սանամոր, ըսում են.— Սանամեր, էս ի՞նչ բան էր, էրա՞զ էր, ի՞նչ էր, ախր մեր էրեխին մորթեր էին, արնոտ դանակ մշակ քու չիպից հանեց, ախըր, էս մո՞նց էղավ, որ հիմի տղեն էլի սաղցավ, կէղնի որ մեր տեսածը էրազ էր։

— Չէ', քավոր ջան, ղորդ էր, չի՞ հմար էրազ էր։ Ես իմ մեղավոր բերնովս լացի, աղոթեցի աստուն, աստուծ իմ աղոթքը լսեց, չունքի ես մեղավոր չէի էդ բանի մեջ, ու էրեխին էլի հոգի տվեց, դուք էլ աղոթք էրեք, աստուն փառք տվեք։

Քավոր ընտից հ'ետև ավելի պատվով պահնչ սանամոր։

Մշակը էլի վազ չէկավ սանամոր մոտից։ Սանամերը տեսավ, որ ճար չի էղնում, հ'ելնում, մի օր քավորոշ ըսում է.— Քավոր ջան, ընձի ճամբու ծախս տուր, ես պտի էրթամ Երուսաղեմ։

Քավորը էրկու հարուր մանեթ տալում է սանամորը, սանամեր դեմ է անում Երուսաղեմ ու էրթում է։ էրթում է, շատ ու քիչ աստուծ դիտե, էրթում հասնում է հ'իրիկվա մթան մի գեղի, էրթում գերեզմների միջով աչում է, որ մի մարդ, մի թազա գերեզման փորեց, մի մեռած մարդ միջեն հանեց։

էրթում, ըսում է.— Ախպեր, ախպեր, էդ ի՞նչ ես անում, մեղք չէ, էդ մեռած մարդ յաղո՞ւզ ես հանում։

— Ի՞նչ անեմ, որ էսոր չ'հանեմ, էս մարդու գլուխը պտի քարերին տամ ջարդեմ, որ սիրտս հովնա։ Ես մի քասիբ մարդ եմ. 200 մանեթ էս մարդուն տվի ձեռքը, որ մի ջաբթուց հետև իմ փարեն տար, ինք մեռավ, էս մարդու տնեցիք ուրացան, իմ փողը չտվին ես էլ իմ հերսուն էս մեռելի գլուխը պտի ջարդեմ։

Հանում էդ կնիկ իր մոտի 200 մանեթ տալում է էդ մարդուն, ու ասում է.— Ախպեր, առ քու էրկու հարուր մանեթդ, էդ մարդուն դիր իրան տեղ, էլի հող լից վրեն։

էդ մարդն էլ իրա փողն առնում է, մեռելին հողով ծածկում ու թողնում էրթում է։ Կնիկն էլ իրան ճամբովն է էրթում։ Մեկ էլ աչում է մթան մի մարդ, մի թարաֆ սազ, մի թարաֆ մեռած, էկավ իրան հասավ։

Կնիկը հարցնում է էդ մարդուն.— Ի՞նչ մարդ ես, հ՞ո՞ւր ես էրթում։

— Ես էն մեռած մարդն եմ, որ դու իմ տեղ 200 մանեթ փող տվիր, ասսու հրամանով ես սաղցա, էկա էղա քեզի հ՚ընկեր, դու հ՞ո՞ւր ես էրթում։

— Ես էրթում եմ Երուսաղեմ։

— Ես էլ եմ քեզի հ՚ընկեր էղնում։

Քիչըմ տեղ որ էրթում են, էդ մեռած մարդը աշում է, որ էդ կնիկը թավաթիր (՞) սիրուն է, միտքը փոխում է։ Կնիկ հասկնում է, թե էդ մարդու միտք գեչ է, ասում է.— Ախպեր, ես քեզի հ՚ընկեր չեմ էղնում, յա՛ դու հ՚առաջ գնա, ես հետ կը մնամ, յա՛ ես հ՚առաջ կէրթամ, դու հետ մնացի։

Էդ մարդ հետ է ընկնում, կնիկ էրթում։

Աստուծ էդ մարդուն պատճում է, էլ չի մեռնում։ Էնենց կես մեռած, կես սաղ ման է գալում, էրթում է իր տուն, սաղ գեղացիք տեսնում, խնդում ու ծիծաղում են էդ մարդու վրեն։

Էդ տերտերի աղջիկ էրթում հասնում է ծովին։ Մտնում է գամին, որ անցնի Երուսաղեմ։ Գամիճին տեսնում է էդ կնկա անչափ սիրունությունը, մտքի մեջ ասում է.— Հեյ վա՞խ, էսենց սիրուն օղլուշաղ ի՞նչ դարտ ունի, որ ման է գալում։

Էրթում գամուց դուրս է հ՚ելնում, իրա համար վարդապետի ջոր է հագնում ու էրթում է Երուսաղեմ։

Հ՚իրկվան գնաց վանքի դուռ կայնավ, ժամը տվին։ Աչեց որ թոմար վարդապետներ էկան, գնացին ժամ աղոթք էնելու։ Տեսավ, որ իր մարդը՝ Սհակ վարդապետ է դառե, էկավ, վարդապետներու հետ գնաց ժամ։ Ինքն էլ մտավ ժամ աղոթք արեց, ժամից պրծան դուս հ՚ելան, մեծ վարդապետը, որ թոմրի գլուխն էր, հ՚ելավ դռան մոտ կայնավ, մեկել վարդապետներ սրով էկան էդ մարդու աչը համբուրեցին ու անցան։

Թոմրից հետև էկավ էդ կնիկ, վարդապետի աչն առավ ու խընդրեց, որ իրան մե հ՚օդա տա, որ ըստից հետև ղատմի պտի մնա հոտ։ Մեծ վարդապետ տեղ տվեց. մնաց ըդտեղ։

Մի վախտ անցավ։ Օր մի, գիշեր էրազի մեջ թոմրի գլխավոր վարդապետը էրազ տեսավ թե՝ ըստից հետև վանքի մեծությունը էդ թազա դալող վարդապետը պտի անե։ Վարդապետ գլուխ չի գնում։ Մի քանի հեղ էլի էրազ գալում, թե. «Որ չեք լսում, ձեր աչքերը կը հանեմ»։

Վարդապետ հ՚ելնում սաբահտան թոմրին կանչում ասում է.—

Ես էրազ եմ տեսած, ըստից հետև էս թազա գալող վարդապետը պտի էղնի թոմրիս մեծ, վանքի վանահայրութուն էս մարդը պտի անե։

Թոմարն էլ համոզվում են։ Ընտից հետև ղատիմի վանքի դուռը նոր գալող վարդապետը կայնում, թոմար սրով գալում են աչն առնում են, սրեն որ գալում է էդոր մարդուն՝ Սհակ վարդապետին, չի թողնում որ իր աչն առնի, հ՚իրարու հետ էրթում են իրանց տեղերը։

Էս կնիկ վարդապետը էնենց է էղնում, որ ո՛ր հիվնդի վրեն որ մի աղոթք է ըսում, հիվանդը սաղնում է։ Ըստոր ձենը շուտով ցըրվում է սաղ աշխարք։ Ամեն տեղից հիվնդներ են գալում, սաղնում ու էրթում են։

Մենք խաբար տանք հարսի տեքրից, քավորոշ մշկից, էն կես մեռած մարդուց ու գամիճուց։

Սմբատը էնենց որ արեց, ասսու հրամանով էնենց գեշ յարա թափավ վրեն, որ էլ մի ասեր։ Քավորոշ մշակն էլ, էլի էնպես էղավ։ Հ՚ուրտի գնացին ճար ու իլլաճ չէղավ։ Ձեն էկավ հասավ էդ մարդկանց թե. «Իշտը Երուսաղեմ էսենց մի սուրբ վարդապետ կա, ինչ հիվանդ որ էրթում է մոտ, սաղնում գալում է»։

Սմբատն հ՚ելնում գալում է քավորոշ գեղ, հարցնում են թե.

— Հ՚ուր ես էրթում։

Ասում է.— էրթում եմ Երուսաղեմ, մի սուրբ վարդապետ կա, էնոր քով։

Քավորոշ մշակ լսում, գալում էդոր հետ հ՚ընկեր է էղնում, էրթում են։

Գալում հասնում են մեռած մարդու դեղ, էն էլ է հ՚ընկեր դառնում, էրթում են։ Իրեքով էրթում մտնում են գամին, աշում են, որ գամիճին լավ, սաղ սալամաթ խոսում է իրանց հետ։ Քիչ մնում է, աշում են, որ էդ մարդ խելքը կորուց, խելռավ։ Հարցնում է էդ մարդկանց թե.— Հ՚ո՞ւր եք էրթում։

Ասում են.— Իշտը Երուսաղեմ մի լավ վարդապետ կա, էրթում ենք էնոր մոտ, բալքի սաղնանք։

Գամիճին ըսում է.— Ես էլ ձեզի հետ գալում եմ էդ վարդապետի մոտ։

Զորսն էլ հ՚իրարու հ՚ընկեր են էղնում ու էրթում են։

Էրթում հասնում են Երուսաղեմ, թափ են էղնում վանքի դուռ։ Աշում են, ժամի վախտ վարդապետներ էկան, գնացին ժամ։ Ժամից հ՚ելան հարցուցին թե՝ էն վարդապետն որն է։ Ամա, էնդոնք որ ժա-

մի դուռ թոփ էին էղած, վարդապետ ճանչցավ, օն›ինչ չ'ասեց, ներս մտավ։

Էդ մարդիկ էկան, չորսն էլ իրան քցեցին էդ վարդապետի հ'ոտաց։

Վարդապետ հարցնում է.— Ի՞նչ եք ասում, լավանա՞լ եք հ'ուզում, հ'ելեք թոմար ձեր մեղքերը խոստովանեք։ Վարդապետներին էլ թոմրին կայնեցնում է։ Հ'առաջ տեղորն է հարցնում.— Դու ի՞նչ մեղք ունիս, ասա'։

Սմբատ մեղքեր թոմար ասում է, էդ մեկը պահում է չի ըսում։

— Էլ մեղք չունի՞ս։

— Չէ,— կըսե Սմբատը։

— Չէ, էլի ունիս մեղք, ասա', ինչունի մեղքերդ թոմար չ'ասես, փրկութուն չ'կա։

Սմբատ մեկ մեկ կոսե.— Իշտա ախպերս գնաց Երուսաղեմ, էլ չէկավ։ Ես էլ գնացի ախպորս կնկա մոտ, միտքս փոխեցի, էն էլ հ'ելավ ընձի խաբեց, փախավ, ընտից հ'ետև էս հիվանդութուն ընձի ձեռ տվեց։

— Դե՜հ, դու էն կողմ կայնի, դու քու մեղքեր ասիր։ Հիմի դուս արի,— կանչում է քավորոշ մշկին,— դո՞ւ ինչ մեղք ունիս։

Էն էլ չի պահում, ըսում է.— Իմ աղիս սանամերը էկավ իր քավորոշ տուն, ես միտքս փոխեցի, շատ չաբալամիշ էղա, իլլաճ չէղավ։ Վերշ հ'ելա մե գիշեր աղիս տղեն մորթեցի, արնոտ դանակը գողտուկ դրի սանամոր շեպը, շառ քցի վրեն, էն էլ սուրբ մարդ էր՝ աղոթք էրեց, տղեն էլ սաղցավ, ընձի էլ անիծեց, ես էսենց էղա։

Սհակ վարդապետ աշում է, որ էն իր ախպերն է, էս էլ քավորոշ մշակն է։

Կանչում է կես մեռածին.— Արի աշեմ, դո՞ւ ինչ մեղք ունիս։

Էն էլ ըսում է.—Ես մեր գեղացի քասիբի մեկից 200 մանեթ ձեռաց փող առա, բիրդան մեռա, իմ ախպրտիկ էդ մարդու փողը չըտվին։ Էդ մարդ էկավ գերեզմնից ընձի հանեց, էն կողմեն մեկ կնիկ էկավ, հանեց էդ մարդու փարեն տվեց, ընձի էլ թաղել տվեց։ Սատանեն մտավ իմ մեջ, ես սաղցա, էկա հասա էդ կնկան, միտքս փոխվավ, էն կնիկ ընձի անիծեց, ես էսենց մնացի։

Կանչում է գամիճուն.— Դո՞ւ ինչ հիվանդ ես, ի՞նչ մեղք ունիս, ասա'։

— Ես մի օր աշեցի մի շատ սիրուն, անլման օղլուշաղ էկավ նստավ գամին, հարցուցի հ'ո՞ւր ես էրթում, ըսավ՝ էրթում եմ Երուսաղեմ։ Ես օնչինչ չասի, մինակ իմ մտքի մեջ ըսի թե. «Հեյ վա՜խ,

Էս սիրուն օղլուշաղը ի՞նչ դարդ ունի, որ էրթում է Երուսաղեմ», ընտից հետև խելքս էրթում ու գալում է։

Հմա վեղարը հանում է գլխից, մազերը թափում են հ՚ուսերի վրա։ Սհակ վարդապետը նոր ճանչնում է, որ իր կնիկն է։

— Իշտը, ես էն կնիկն եմ։

Տեգերը, քավորոջ մշկին ու էն մեռած մարդուն ըսում է.— Ձեր աղատումն էն է, որ գետին պատռի, դուք նե էրթաք ու ձեզի ծածկե։

Ասելու պես գետին պառռում է, երեքն էլ նե են էրթում։

Գամիճուն էլ ըսում է.— Դու էլ առողջացիր քու գործին գնա։

Գամիճին սաղնում, էրթում է իր գործին։

Ընտից հ՚ետև ինքն ու Սհակ վարդապետը էլի ապրում են հ՚իրար հետ, ինչունի մահը։ Որ մեռնում են, տանում էրկսին մի տեղ թաղում են ու վրեն էլ մի պզտիկ վանք են շինում։